



ԱՎԱՏՐԱԼԻՆ—ՀՆԴԿԱՍՏԱՆ

ՀՆԴԻԿ ՄԱԼԱԲԱՐ ԵԿԵՂԵՑԻ ԱՅՑԵԼՈՒԹԵԱՆ ՄԱՍԻՆ

Ազգիս Վեհափառ Հայրապետ, Ն. Ս. Օ. Տ. Տ. Վազգէն Ա. Ամենայն Հայոց Կաթողիկոսի հայրապետական կարգադրութեամբ, Աստրալիոյ եւ Նոր Զելանտայի Առաջնորդ, Տ. Աղան եպս. Պալիօգեան 7—17 Յունր. 1989, Հայաստանեայց Առաքելական Եկեղեցին եւ Ամենայն Հայոց Կաթողիկոսը ներկայացուց Հնդիկ Մալաբար Եկեղեցւոյ Յորեկինական հանդիսութեանց, նսիրուած Երանաշնորհ Տ. Տ. Բասիլիոս Գիվարքիզ Բ. Կթղ.ի վախճանման 25-ամեակին:

Բասիլիոս Գիվարքիզ Բ. Կթղ.ը ծնած 1874-ին, սարկաւագ ձեռնադրուած է 1892-ին ու քահանայ 1898-ին: Եպիսկոպոսական աստիճանին արժանացած է 1912-ին ու 1929-ին քարձրացած է Կաթողիկոսական Աթոռ. 35 տարի բեղուն գործունէութիւն եւ անքասիր հաւատաւոր կեանք մը ունենալէ ետք իր յաւիտենական հանգիստը գտած է 4 Յունր. 1984-ին: Կաթողիկոսական զահին վրայ բազմելէ ետք, ձեռնադրած է 11 եպս.ներ ու հազարէ աւելի քահանայ և սարկաւագ:

Յորեկինական հանդիսութեան ներկայ էր Ռումանիոյ Եկեղեցւոյ պետ, Տ. Թէոկտիստ Պատրիարքը իր շքախումբով:

Յունր. 7-ին Աղան եպիսկոպոս Հնդիկ Եկեղեցւոյ կեդրոն՝ Քոթայամ ժամանելով, ներկայացաւ նոյն Եկեղեցւոյ պետ, Պասիլիոս Մար Թովմա Մատթէոս Ա. Կտղ.ի, ներկայացնելով Հայց. Եկեղեցւոյ պետ, Ն. Սրբութիւն Վազգէն Ա. Կթղ.ի եղբայրական սիրոյ ողջոյնները:

Կիր. 8 Յունր.-ին Քոթայամի Աթոռացիստ Մայր տաճարէն ներս տեղի ունեցաւ հանդիսաւոր ս. պատարագ, զորս մատոյց Մատթէոս Մար Կտրիլոս Սրբազան, Քուիլոնի առաջնորդը: Յընթացս ս. պատարա-

գի հիւր Եկեղեցիներու ներկայացուցիչներուն առիթ տրուեցաւ խօսքով հանդէս գալու: Աղան Սրբազանը իր խօսքի մէջ նախ փոխանցեց Վեհափառ Հայրապետի եւ Հայց. Եկեղեցւոյ եղբայրական ողջոյնները. ապա անդրադարձաւ երկու եկեղեցիներու սիրալիր յարաբերութեանց ու Երանաշնորհ Կթղ.ի բազմամեայ ծառայութեան ու անքասիր կեանքին. խօսքի աւարտին անդրադարձաւ Հայաստանի երկրաշարժին եւ աղէտին:

Յաւարտ ս. պատարագի՝ նախագահութեամբ Մալաբար Եկեղեցւոյ պետի տեղի ունեցաւ հանդիսաւոր հոգեհանգստեան պաշտօն Երանաշնորհ Կթղ.ի հոգւոյն ի հանգիստ: Եկեղեցական արարողութենէ ետք տեղի ունեցաւ Աջհամբոյր ու բազմահազար հաւատացեալներ իրենց լուծման նուիրաբերեցին Հայաստանի աղէտեալներուն:

Նոյն օրը կէսօրէ ետք տեղի ունեցաւ աշխարհիկ հանդիսութիւն նուիրուած Երանաշնորհ Կթղ.ի վախճանման 25-ամեակին: Եկեղեցական թափօրը սկիզբ առաւ քաղաքի կեդրոնէն, ուր քաղաքի փողոցներէն երեք ժամ ընթանալէ ետք, հասաւ դպրեվանքի շրջափակը: Յիշեալ թափօրին հետեւեցան աւելի քան 100 հազար հաւատացեալներ: Մալաբար եկեղեցւոյ Պետ, Բասիլիոս Մար Թովմա Մատթէոս Ա. Կթղ.ը տպաւորիչ ու քրիստոնէաշունչ խօսքով հանդէս եկաւ, որու աւարտին անդրադարձաւ Հայաստանի աղէտին, իր խօսքին միացնելով Եկեղեցւոյ ու հաւատացեալներու նուիրատուութիւնը 100 հազար հնդկական բուսի: Յիշեալ հանդիսութեան կրկին անգամ առիթ տրուեցաւ Աղան Ա.-ի արտայայտուելու. հոս եւս Վեհափառ Հայրապետի ու Հայց. եկեղեցւոյ

ողջոյնները փոխանցեց, անդրադարձաւ երկու դասակից եկեղեցիներու սերա, մտերիմ ու անկեղծ յարաբերութեանց Վեհափառ Հայրապետի այցելութեան հնդիկ եկեղեցի 1968 եւ ապա խօսքի աւարտին շնորհակալութիւն յայտնեց հնդիկ եկեղեցւոյ եւ ժողովուրդի նուիրատուութեան համար:

Հոս եւս տեղի ունեցաւ նուիրատուութիւն ի նպաստ Հայաստանի աղէտնալներուն:

Յաւարտ հաւաքի, Կաթողիկոսարանի սեղանատանը տեղի ունեցաւ պաշտօնական ընթրիք: Հնդիկ եկեղեցւոյ պետի կողքին տեղ գրաւեցին Ռումէն եւ Հայ եկեղեցիներու ներկայացուցիչները:

Բշ. 9 Յունր.-ին տեղի ունեցաւ Դպրեւանքի երաժշտական մասնաճիւղի պաշտօնական բացումը, որուն ներկայ եղան Մալաբար եկեղեցւոյ պետն ու եպս.-ական դասը, Ռումէն եւ Հայ եկեղեցիներու պատուիրակները եւ ընտրանի հասարակութիւն մը: Բացման արարողութեան աւարտին, դպրեւանքի ուսանողութիւնը գեղարուեստական յայտագրով մը հանդէս եկաւ:

Գշ. 10 Յունր.ին հիւր եկեղեցիներու ներկայացուցիչները, ընկերակցութեամբ Մալաբար եկեղեցւոյ բարձրաստիճան հոգեւորականութեան այցելեցին զանազան եկեղեցիներ ու ուխտավայրեր, ուր եւ ընդունեցան բազմահազար հաւատացեալներու կողմէ: Յիշեալ վայրերու մէջ կատարուեցան եկեղեցական պատշաճ երգեցողութիւն եւ հիւր եկեղեցականներ իրենց խօսքով խրախուսեցին հաւատացեալ ժողովուրդը ամուր մնալու իրենց հաւատքին մէջ: Վերջին այցելութեան վայրն էր Քուփլոն, ուր յաւարտ եկեղեցական արարողութեան, հիւրը եւ սեղանակիցը եղան տեղւոյն առաջնորդ Մատթէոս Մար Կուրիոս Արքազանի, եկեղեցական ու պետական անձնատրութեանց մասնակցութեամբ:

Դշ. 11 Յունր.ի առաւօտուն Հնդիկ Մալաբար եկեղեցւոյ պետ, Տ. Տ. Բասիլիոս Մար Թովմա Մատթէոս Ա. Կթղ.ը փոխադարձ այցի եւ բարի ճանապարհ մաղթելու եկաւ Ռումանիոյ Պատրիարքին ու Հայց. եկեղեցւոյ ներկայացուցիչին: Պատշաճ ընդունելութենէ ետք, տեղի ունեցաւ նուէրներու փոխանակում:

Եշ. 12 Յունր.ին առաւօտուն Կանուխ Աղան Արքազան, Մալաբար եկեղեցւոյ պետի օրհնութիւնը ստանալէ ետք, հրաժեշտ տուաւ Աթոռանիստ Քոթայամ քաղաքին ու մեկնեցաւ Մատրաս, որպէս հիւրը տեղւոյն առաջնորդ Զաքարիա Մար Դիո-

նեսիոս Արքազանի: Նոյն օրն իսկ այցելեց Մալաբար եկեղեցւոյ Մայր տաճարը եւ ապա Մատրասի հայոց եկեղեցին: Մատրասի եկեղեցւոյ գաւիթին մէջ թաղուած է ԱԶԴԱՐԱՐ առաջին հայ թերթի խմբագիր Յարութիւն քհն. Ծմաւոնեան. հոս Արքազան հայրը կատարեց հոգեհանգստեան պաշտօն քոլոր մնջեցելոց հոգիներուն ի հանգիստ:

Ուր. 13 Յունր.ին Աղան Արքազան ժամանեց Տելհի, որպէս հիւրը տեղւոյն առաջնորդ Պօղոս Մար Կրէկորիոս Արքազանի: Նոյն երեկոյեան Ռումէն եկեղեցւոյ պատուիրակութիւնն ալ ժամանեց Տելհի:

Շբ. 14 Յունր.ին Ռումէն եւ Հայ եկեղեցիներու ներկայացուցիչներ, ընկերակցութեամբ Տելհիի առաջնորդին, այցելեցին Թաճ Մահալ պատմական յուշարձանը:

Կիր. 15 Յունր.ին Աղան Ա., Մալաբար եկեղեցւոյ Առաջնորդարանի Մատուոին մէջ մատուց ա. պատարագ ու քարոզեց. ան իր քարոզի մէջ ներկայ հաւատացելոց փոխանցեց Ամենայն Հայոց Վեհափառ Հայրապետի եւ Ս. Էջմիածնի օրհնութիւնը: Ս. պատարագին ներկայ էին 300-ի հասնող հայեր, մեծ մասամբ վերջերս ժամանած պարսկաստանէն որպէս գաղթականներ: Յաւարտ ա. պատարագի տեղի ունեցաւ երեք երեխաներու մկրտութիւնը, որուն ներկայ եղան քոլոր հաւատացեալները:

Վեհափառ Հայրապետի բացառիկ կարգադրութեամբ էր որ Աղան Արքազան այցելեց Տելհի, գաղթական հայերու հոգեւոր սնունդ ու մխիթարութիւն ջամբելու համար: Ահա այս գաղթական հայերն են որ Հայաստանի աղէտէն ետք, մասնաւոր հոգեհանգիստ կատարած են ու շուրջ 10 հազար րուպի հաւաքած են Հայրենի աղէտնալներուն համար:

Բշ. 16 Յունր.ին հիւր եկեղեցիներու պատուիրակները, ընկերակցութեամբ Տելհիի առաջնորդին պաշտօնական այց տրւին Կանտիի, Նեհրուի եւ Ինտիրա Կանտիի յուշադամբարաններուն, ուր եւ ծաղկեպսակ գետեղեցին: Նոյն երեկոյեան Ռումէն պատուիրակութիւնը վերադարձաւ Ռումանիա:

Տելհի գտնուած օրերուն, Աղան Ա. առիթ ունեցաւ, հետաքրքրուելու տեղւոյն հայ գաղթականներու հարցերով:

Յիշեալ այցելութիւնը առիթ էր վերանորոգելու մեր սերտ յարաբերութիւնը Հնդիկ Մալաբար եկեղեցւոյ հետ:

ԱՂԱՆ ԵՊՍ. ՊԱԼԻՕԶԵԱՆ